



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 27(418) «17» դեկտեմբերի 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | |
|-----|--|----|
| | ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ | |
| 594 | «2020 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-839-Ն հրամանագիրը | 2 |
| 595 | «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-884-Ն հրամանագիրը | 3 |
| | ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 596 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 647-Ն որոշումը | 4 |
| 597 | «Նոտարական գործողությունների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 675-Ն որոշումը | 5 |
| 598 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 662-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 676-Ն որոշումը | 8 |
| 599 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 677-Ն որոշումը | 9 |
| 600 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 21-ի N 238-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 679-Ն որոշումը | 10 |
| | ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 601 | ««Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության ջեռուցման սակագինը սահմանելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 61-Ն որոշումը | 11 |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ

ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. 2021 թվականի հունվար-փետրվար ամիսներին անցկացնել Արցախի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության ձմեռային գորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. 2021 թվականի հունվար ամսում գորացրել օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

3. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ սույն հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ընդունել հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 11

Ստեփանակերտ

ՆՀ-839-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 3-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Սահմանել Արցախի Հանրապետության կառավարության հետևյալ կառուցվածքը.

- 1) պետական նախարար.
- 2) աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն.
- 3) առողջապահության նախարարություն.
- 4) արդարադատության նախարարություն.
- 5) արտաքին գործերի նախարարություն.
- 6) էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն.
- 7) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն.
- 8) պաշտպանության նախարարություն.
- 9) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.
- 10) քաղաքաշինության նախարարություն.
- 11) ֆինանսների նախարարություն:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական նախարարի լիազորություններն իրականացնում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը:

3. Սահմանել Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների հետևյալ կառուցվածքը.

- 1) ազգային անվտանգության ծառայություն.
- 2) արտակարգ իրավիճակների պետական ծառայություն.
- 3) կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե.
- 4) ոստիկանություն.
- 5) պետական եկամուտների կոմիտե:

4. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ երկշաբաթյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող որոշումներ:

5. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՆՀ-3-Ն հրամանագիրը:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 17
Ստեփանակերտ
ՆՀ-884-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 դեկտեմբերի 2020թ.

N 647-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 176 և N 177 որոշումներով հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,085 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 դեկտեմբերի 2020թ.

N 675-Ն

ք. Ստեփանակերտ

**ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ
ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ
ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ք ո ղ ու մ է.**

1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում սկսված պատերազմական գործողությունների հետևանքով զոհվածների ընտանիքների անդամներին (ծնող, ամուսին, երեխա) և մշտական բնակության վայրից տեղահանված բնակիչներին մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ազատել հետևյալ պետական տուրքերի վճարումներից՝

1) նոտարական գործողությունների ռոքրտում՝

ա. անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ՝ նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար,

բ. անշարժ գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման, ռենտայի և այլն) պայմանագրերը վավերացնելու համար,

գ. ավտոտրանսպորտային միջոցների օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը վավերացնելու համար,

դ. գրավի (բացառությամբ անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի) պայմանագրերի վավերացման համար,

ե. անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի պայմանագրերի վավերացման (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի) համար,

զ. գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի գրավի պայմանագրերի վավերացման համար,

է. գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձերի, այգեգործական հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար,

ը. այլ պայմանագրերի վավերացման համար,

թ. կտակների վավերացման համար,

ժ. ժառանգության իրավունքի վկայագրեր տալու և նվիրատվության պայմանագրերի վավերացման համար,

ժա. կտակակատարի լիազորությունների հավաստման վկայագրեր տալու համար,

ժբ. անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր վավերացնելու համար,

ժգ. շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների) լիազորագրեր վավերացնելու համար,

ժդ. գույքային իրավունքների կառավարման լիազորագրերի վավերացման համար,

ժե. ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի լիազորագրերը վավերացնելու համար,

ժզ. ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի վերալիազորման իրավունքով լիազորագրերի վավերացման համար,

ժէ. այլ լիազորագրերի վավերացման համար,

ժը. ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար,

ժթ. փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար,

իա. փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար,

իբ. փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում՝ թարգմանչի ստորագրությամբ յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար,

իգ. գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմիններին գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ նախնական նշում կատարելու ծանուցման համար,

իդ. առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու վերաբերյալ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնության վավերացման համար,

իէ. իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար՝ անձանց ազգակցական հարաբերությունները հաստատելու համար, անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու փաստը հաստատելու համար, ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցումը հաստատելու համար, ժառանգությունն ընդունելու և ժառանգության բացման վայրի փաստի հաստատման համար, իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը հաստատելու համար, սեփականության իրավունքով գույքի տիրապետումը հաստատելու համար,

իզ. նոտարական այլ գործողությունների համար.

2) քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում՝

ա. անվան, հայրանվան, ազգանվան փոխման համար, ներառյալ՝ վկայական տալը,

բ. ամուսնության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը,

գ. ամուսնալուծության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը,

դ. քաղաքացիական կացության ակտերի գրանցումների փոփոխություն, լրացում և ուղղում կատարելու համար, ներառյալ՝ վկայական տալը,

ե. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու համար,

զ. հայրության (մայրության) որոշման գրանցման համար,

է. քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու համար, ներառյալ՝ վկայականներ տալը,

ը. քաղաքացիական կացության ակտերի գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար,

թ. քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք ստանալու ծանուցում Արցախի Հանրապետության տարածքում ուղարկելու համար,

ժ. օտարերկրյա պետություններից քաղաքացիների դիմումի համաձայն՝ նրանց վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք ստանալու համար,

ժա. ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու համար,

Ժբ. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու վերաբերյալ տեղեկանք տալու համար:

2. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հաշվետվություն՝ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված պետական տուրքերի չափերի վերաբերյալ:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը սույն որոշման 2-րդ կետում նշված հաշվետվությունը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից ապահովում է սույն որոշման 1-ին կետում նշված պետական տուրք վճարողների փոխարեն Արցախի Հանրապետության կառավարության կողմից վճարման ենթակա պետական տուրքերի վճարումները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի նոյեմբերի 10-ից ծագած հարաբերությունների վրա:

5. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձանց կողմից վճարված պետական տուրքերն ենթակա են վերադարձման:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 դեկտեմբերի 2020թ.

N 676-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 662-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 18-ի «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների իրականացման կարգը և սակագները հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցների օգտագործման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության համար արտաբյուջետային հաշիվ բացելու մասին» N 662-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին կետ.

«4.1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված անձանց ընտանիքների անդամները (ծնող, ամուսին, երեխա) և մշտական բնակության վայրից տեղահանված անձինք մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ազատվում են նոտարի կողմից մատուցվող՝ սույն որոշմամբ սահմանված վճարովի ծառայությունների համար վճարումներ կատարելու պարտավորությունից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 դեկտեմբերի 2020թ.

N 677-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 608-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒժԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի «Իրավաբանական անձանց պետական գրանցման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությանն արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 608-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 դեկտեմբերի 2020թ.

N 679-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲՍՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 238-Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 21-ի «Աշնանացան և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 238-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի սեպտեմբերի 21-ի

«ՋԵՐՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՋԵՌՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 61-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «ա» կետը, 16-րդ հոդվածի 2-րդ կետը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 30-ի «Արցախի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 23Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1-Ն որոշումը և հաշվի առնելով «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի հուլիսի 22-ի հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության ջեռուցման սակագնի վերանայման հայտը և սահմանել ջեռուցման սակագինը մեկ օրվա համար 8,04 ՀՀ դրամ/խորանարդ մետր՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 9,65 ՀՀ դրամ/խորանարդ մետր՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հոկտեմբերի 22-ից:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 21
ք. Ստեփանակերտ